ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 12, 1965 Общественные науки

Խ. Ա. Փորոյան

ԴԱՏԱՐԱՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԸՍՏ ՄԽԻԹԱՐ ԳՈՇԻ ԴԱՏԱՍՏԱՆԱԳՐՔԻ

Միջնադարյան Հայաստանի կամ Մխիթար Գոշի Դատաստանագրքում ներկայացված դատարանակազմությունն ու դատավարությունը հատուկ քննության առարկա են դարձրել հմուտ հայագետներ Վ. Բաստամյանցը, Հ. Կարստը, Խ. Սամուելյանը, Ն. Մելիք-Թանդյանը և Ա. Սուքիասյանը։ Մի շարք անվանի հայագետներ էլ (Գարագաշյան, Ն. Ադոնց, Լ. Խաչիկյան) այս կամ այն առիթով անդրադառնալով նշված հարցերին, արել են թեև հպանցիկ, բայց արժեքավոր դիտողություններ։ Այդուհանդերձ հայկական միջնադարյան դատարանային համակարգի ամբողջական պատկերը ներկայացնելու առաջին և միակ փորձը պատկանում է Հ. Կարստին։ Բազմավաստակ գիտնականը Սմբատ սպարապետի Դատաստանագրքի իր մեծարժեք հրատարակության ծանոթագրություններում, որոնք մի ստվար հատոր են կազմում, հայոց պատմությունը բաժանում է մի քանի շրջանի։ Աղբյուրների բացակայության կամ սակավության պատճառաբանությամբ, նա Արշակունյաց հարստության ու պարսկա-արաբական տիրապետության շրջանների դատարանակազմության մասին մի քանի խոսք է ասում միայն։ Հ. Կարստն ավելի հանգամանորեն կանգ է առնում հաջորդ պատմաշրջանի վրա, որը բաժանում է երեք մասի՝

ա) Բագրատունյաց հարստություն.

բ) Դրան հաջորդող թագավորազուրկ շրջան կամ օտար տիրապետություն

գ) Կիլիկյան թագավորություն։

Մեզ հետաքրքրող երկրորդ շրջանի դատարանային համակարգը Հ. Կարստը ներկայացնում է հետևյալ ձևով (թարգմանաբար բերում ենք համապատասխան ամբողջ հատվածը)։

«1. Կաթողիկոսի սինոդալ դատարան (Sinodalgericht des Katholikos)

2. Եպիսկոպոսական դատական ատյաններ՝

ա) եկեղեցական-կանոնական և

բ) աշխարհիկ գործերի համար

3. Գավառային իշխանական և տանուտիրական դատարան. (Gaufurstliche und Schulzengerichte)։ *Այս վերջին դատարանները, ըստ հավաստի փաստերի, տեղ-տեղ գոյություն ունեին առավելապես հյուսիսային և արևելյան առանձին շրջաններում, այնքանով, որքանով այդ շրջանների բնիկ տերերին նվաճողների կողմից դատական իրավասություն էր թողնվել։ Տվյալ դատարանները, բնականաբար, դատավարություն պետք է բաժանեին դրանց կողքին գոյություն ունեցող եպիսկոպոսական աշխարհիկ դատարանների հետ, որովհետև եպիսկոպոսական դատական իշխանությունն էր իրականացնում հսկողությունը դատարանների վրա։ Այնուամենայնիվ պաշտոնական ու օրինական դատարան միայն եպիսկոպոսական դատարանն է։ Դատաստանագրքի նախադրության 6-րդ գլխում եպիսկոպոսն անվանված է առաջին դատավոր։ Դատաստանագրքի առաջին մասի 96-րդ հոդվածը չգիտի այլ դատավոր, քան եպիսկոպոսները։ «Դատավոր» հասկացությունը դրանով, պարզապես, նույնացվում է եպիսկոպոսի հետ*[1]։ *Դատարանային այս համակարգը Հ. Կարստն ուրվագծել է ըստ Մխիթարի Դատաստանագրքի։ Սակայն պետք է նշել, որ միջնադարյան Հայաստանի դատարանների տեսակները, ըստ Դատաստանագրքի, շատ ավելի են, քան արձանագրել է Հ. Կարստը։ Եթե նույնիսկ մտածենք, որ Հ. Կարստը ներկայացրել է միայն այն դատարանները, որոնք իրականում կային և գործում էին, ապա պետք է նշենք, որ նրա ուրվագծած համակարգը դարձյալ թերի է և չի ընդգրկում գործող բոլոր դատարանները։*

Ն. Մելիք-Թանդյանը ուսումնասիրել է հատկապես հայկական եկեղեցական դատարանա-

[1] Sempadscher Kodex aus dem 13. Jahrhundert in Verbindung mit dem grossarmenischen Rechtsbuch des Mechithar Gosch, edert und kommentiert von Josef Karst, zweiter Band, Kommentar, Strassburg, 1905, էջ 357։ *Ընդգծումը հեղինակինն է։*

կազմությունը։ Նա գրում է. «Հայոց եկեղեցու դատավարական կյանքը կարելի է բաժանել երեք մասի, ա) Լուսավորչի տոհմի կաթողիկոսության ժամանակ, Լուսավորչից մինչև Սահակ, բ) Մարզպանության ժամանակից մինչև հայոց թագավորության ջնջումը. գ) Մահմեդական տիրապետության միջոց...

Ա) Այս շրջանում երեք դատական աստիճաններ կային. կաթողիկոսական՝ իր խորհրդակից եպիսկոպոսներով և շրջիկ հոգևորականներով. եպիսկոպոսական՝ սահմանված յուրաքանչյուր թեմի գործերի համար և քորեպիսկոպոսական՝ գավառակների եկեղեցական կառավարության և դատաստանի համար։ Վարչական և դատաստանական բոլոր գործերը գտնվում էին այս երեք աստիճանի ատյաններում...

Բ) եկեղեցական դատարանի երկրորդ շրջանն ընկնում է Արշակունյաց թանկումից մինչև Ռուրինյանց անկումը ...Այս շրջանում էլ երեք աստիճանով եկեղեցական դատավարությունը տիրապետող էր. ա) ամբողջ աշխարհի համար բարձրագույն և վերջին դատարան. բ) թեմական—թեմի համար և գ) քորեպիսկոպոսական—գավառի և համայնքների համար։ Բարձրագույն ատյանը կազմում էր համազգային եկեղեցական ժողովը կաթողիկոսի կամ նրա բացակայության միջոցին ավագագույն եպիսկոպոսի նախագահությամբ...

Գ) դատարանական երրորդ շրջանը կազմում է Ռուրինյանց անկումից հետո մինչև ռուսական տիրապետություն և տաճկահայոց մեջ մինչև 1860 թ. Սահմանադրությունը»[2]։

Վ. Բաստամյանցը իր մեծարժեք «Յառաջաբանութեան» այլևայլ էջերում[3] խոսում է հոգևոր ատյաններից միայն եպիսկոպոսական դատարանի մասին. թվում է, դրանով էլ սպառված համարելով Դատաստանագրքում ներկայացված նման ատյանների շարքը, իսկ աշխարհական դատարանների մասին գրում է. «Բացի սորանից՝ Գոշը չէ կարգում հատուկ դատավորներ և դատարաններ աշխարհական գործերի համար. այլ դատավորական իրավասությունը թողնում է թագավորի և իշխանների ձեռքին»[4]։

Պրոֆ. Խ. Սամուելյանը Դատաստանագրքում արտահայտված դատարանային համակարգը ներկայացնելու հարցը սպառված է համարում վերաշարադրելով նախադրության 6 դլխի հայտնի հատվածը։ «Մխիթար Գոշի Դատաստանագիրքը,— գրում է նա,— զանազանում է երկու տեսակ դատաստան՝ մարմնավոր, աշխարհական եւ հոգևոր, եկեղեցական։ Առաջին դատաստանը գտնվում է թագավորի, իշխանների և ընդհանրապես աշխարհական վարչական անձանց իրավասության ներքո, իսկ երկրորդը—եպիսկոպոսների, վարդապետների և քահանաների»[5]։

Ահա այն ամենը, ինչ գտնում ենք մեր գրականության մեջ Մխիթար Գոշի Դատաստանագրքում արտահայտված դատարանային համակարգի վերաբերյալ։ Հայագիտական այլևայլ աշխատություններում կան ակնարկներ կամ առանձին դիտողություններ քննվող հարցի շուրջը, սակայն նրանցից մեջբերումները ավելորդ են թվում, որովհետև դրանք նոր բան չեն ավելացնում և չեն անցնում վերը նշված սահմաններից։

Այժմ փորձենք ներկայացնել հայկական դատարանային համակարգի ամբողջական պատկերը ըստ Մխիթարի Դատաստանագրքի։

Սկզբից ևեթ նշենք, որ դատարանի յուրաքանչյուր տեսակն հավաստող փաստերի քանակը շատ է, բայց տեղ չզբաղեցնելու պատճառով կսահմանափակվենք ամեն դեպքում երկու-երեք փաստ վկայակոչելով։

Մխիթարը գրում է. «Եւ արդ՝ մեզ այսպէս լիցի. զի ի տեղւոջ յորում լիցի քրիստոնեայ թագաւոր կամ իշխան նոքա զաշխարհի դատաստանաս հոգայցեն ատենիւ եւ իրաւամբք»[6] կամ՝ «Այլ զթագաւորի կարգեալ իշխան թագաւորն աքսորեսցէ եւ խրատեսցէ»[7]։ Համապատասխան պատիժներ սահմանելով դավաճանության, սպանության և տերունի զանձի գողության համար, Մխիթարն, այնուհետև, ավելացնում է. «Զայդոսիկ թագաւորն դատիցի»[8]։ Ինչպես տեսնում ենք

---

2 Ն. Վ. Մելիք-Թանդյան, Հայոց եկեղեցական իրավունքը, Բ գիրք, Շուշի, 1905, էջ 210—216։

3 Տե՛ս էջ 126, 132 և այլուր։

4 Մխիթարայ Գոշի Դատաստանագիրք հայոց, իրաւաբանական հետազօտութիւնք հանդերձ ծանօթութեամբք, Վահան ծ. վարդապետի Բաստամեանց, Վաղարշապատ, 1880 թ. Յառաջաբանութիւն, էջ 132, այսուհետև՝ Յառաջաբանութիւն։

5 Խաչիկ Սամուելյան, Մխիթար Գոշի Դատաստանագիրքն ու հին հայոց քաղաքացիական իրավունքը, Վիեննա, 1911, էջ 117։ Ընդգծումները հեղինակինն են։

6 Դատաստանագիրք հայոց, էջ 26։

7 Նույն տեղում, էջ 422։

8 Նույն տեղում, էջ 311։

խոսքը թագավորական դատարանի մասին է։ Այստեղ անհրաժեշտ է մի փոքրիկ բացատրություն։ Այդ դատարանի մասին Մխիթարի խոսքը չպետք է տարօրինակ թվա, այն պատճառաբանությամբ, թե այդ ժամանակ Հայաստանում չկար ո՛չ թագավոր և ո՛չ էլ թագավորություն։ Ճիշտ է իրականում, կամ լավ է ասել, անվանապես. թագավոր չկար, բայց թե՛ բուն երկրում, և թե՛ Կիլիկիայում ներքին ու արտաքին իրադարձությունները զարգանում էին այն ուղղությամբ, որ կարող էին տանել դեպի թագավորական իշխանության վերականգնումը։ Ինչպես հայտնի է Կիլիկիայում հայկական ազգային թագավորությունն, իրոք, ստեղծվեց, իսկ բուն երկրում Զաքարյանները անկախ ինքնակալներ էին և եթե թագավոր չէին, ապա միայն անվանապես։ Մխիթարի հեռատես ու խորաթափանց միտքը շոշափում է գալիքի ուրվապատկերը։ Հայկական թագավորության վերականգնումը Մխիթարի ամենանվիրական երազն է, և նա ընդառաջում է ցանկալի ապագային, սահմանելով նաև թագավորական իշխանության իրավա-քաղաքական հիմունքները։

Այնուհետև. «Իշխանաց մի լիցի զսպանողսն սպանանել առանց հրամանի թագաւորաց, իսկ զզողսն խրատել իշխան լիցին»[9], կամ՝ «Այլ խարդախիցն խրատ ըստ հրամանի իշխանացն լիցի»[10], կամ՝ «Իսկ դահեկանահատիցն եւ դրամակոփիցն զձեռսն հատանել հրամանաւ իշխանացն»[11], կամ՝ «Տեսանեմք զի այժմ ոմանք... յիշխանաց զի աշառանօք եւ տգիտութեամբ թիւրեն զուղիղ դատաստանն»[12]։ Այս փաստերը հաստատում են, որ կար նաև իշխանի կամ իշխանական դատարան։

Անցնենք վկայությունների հաջորդ խմբին. «Զայդոսիկ թագաւորն դատիցի եւ զայլս եւս դատաստան հասարակաց ի դատաւորսն թողցէ»[13], կամ՝ «Եւ կամ դատաւորք ճշգրիտ քննութեամբ ըստ հրամանի իշխանաց առնիցեն»[14], կամ՝ «Արուեստաւորք ամենայն ըստ որում եւ իցեն արուեստի, եթէ հատուածով գործիցեն եւ եթէ վարձով, յորժամ ոչ ըստ հաճոյից տեառն գործիցեն, այլեւ զնիւթն ապականիցեն, դատաստանաւ է ըստ հաճոյից նոցա առնել դարձեալ, կամ դապականեալն ի գնոյն ըստ արժանւոյն լնուլ եւ ապա լիով հասանել վարձու։ Ապա թէ ոչ-պակասեալ ի վարձէ ըստ արժանւոյն որպէս տեսանեն դատաւորք արասցեն»[15]։ Ասել է թե. «Բոլոր արհեստավորները, ինչ արհեստի էլ որ պատկանելիս լինեն և ինչպես էլ որ աշխատեն՝ հատվածով թե վարձով, թե կգործեն ոչ ըստ ցանկության պատվիրատուի, այլև նյութը կփչացնեն, պետք է պատվիրատուի ուզած ձևով նորից կատարեն աշխատանքը կամ փչացրածի գինը լրացնեն և նոր միայն ստանան իրենց վարձը լիովին։ Ապա թե ոչ՝ դատավորներն իրենց հայեցողությամբ ըստ արժանվույն պակասեցնեն վարձը»։

Թագավորական և իշխանական դատարաններից բացի, ուրեմն, կային նաև ստորին դատարաններ, որոնք քննում էին մանր գործեր, առավելապես քաղաքացիական բնույթի։

Վերը բերված քաղվածքները ցույց են տալիս, որ թագավորական դատարանին ենթակա էին այն գործերը, որոնք ընդգրկվում են delicta publica հասկացությամբ, և որոնք, ուրեմն, հանրային իրավական բնույթ ունեին։ Այսպիսով, հասարակական անվտանգության ու հանրային անդորրի դեմ ուղղված առավել վտանգավոր հանցագործությունները հետապնդվում են պետության կողմից ի դեմս թագավորի։ Թեև դատավարությունն ընդհանուր առմամբ մրցակցական-մեղադրական է, բայց նշված հանցագործությունները հետապնդվում են նաև ex officio, ի պաշտոնե։ Այս փաստը հաստատում է, որ թագավորական դատարանը պետական դատարան է. այսինքն՝ իրեն ընդդատյա գործերով նրա իրավասությունը տարածվում է ամբողջ պետության վրա և պետության բոլոր քաղաքացիների վրա։

Իշխանական դատարանները չունեն մահվան դատապարտելու իրավունք։ Այդ իրավունքը նրանց տալիս է թագավորը («Իշխանաց մի լիցի զսպանողսն սպանանել առանց հրամանի թագաւորաց»)։ Հետևապես հանրայնության դեմ ուղղված հանցագործությունների նկատմամբ իշխանների դատական իրավասությունը հիմնված է ոչ թե նրանց տոհմական-ժառանգական իրավունքների վրա, այլ թագավորի կողմից դատական իշխանության փոխանցման սկզբունքի վրա։ Դա նշանակում է, որ տվյալ գործերով իշխանները որպես դատավորներ պետական-թագավորական պաշտոնյաներ են, ուստի նրանց դատարաններն էլ պետական դատարաններ։ Նույնը վերա-

9 Դատաստանագիրք հայոց, էջ 311։

10 Նույն տեղում, էջ 435։

11 Նույն տեղում։

12 Նույն տեղում, էջ 12։

13 Նույն տեղում, էջ 311։

14 Նույն տեղում, էջ 436։

15 «Դատաստանագիրք հայոց», էջ 436։

բերում է նաև աշխարհական ստորին դատարաններին։ Այս դատարանի դատավորները իրենց լիազորությունները ստանում են դատական իշխանության փոխանցման կարգով։ Ստորին դատարանի դատավորները կամ հատուկ պաշտոնյաներն են՝ առավելապես քաղաքներում, կամ գյուղական տանուտերերն են, որոնք դեղջավագի պաշտոնը զուգակցում են դատավորի պաշտոնի հետ։ Վերջին դեպքում այդ դատարանները կարելի է անվանել տանուտիրական։

Այսպիսով, թագավորական, իշխանական և ստորին դատարանները պետական դատարաններ են և սրանց ընդդատությանն են ենթակա համարյա բոլոր բրեական գործերը և քաղաքացիական գործերի մեծ մասը։

Դատաստանագիրքը ներկայացնում է աշխարհական դատարանների ուրիշ երկու տեսակ ևս։ Դիմենք փաստերին։

«Իսկ թագաւոր խրատել. եթէ այնպէս հարկ լիցի պահել զխաղաղութիւն, կամօք լիցի այլ թագաւորի եւ հայրապետի. [illegible] կամ՝ «Այլ իշխանաց իշխան-զիշխան խրատել եւ կամ աքսորել եւ զազատ. թէ ի նոցունց կարգեալ իցէ—նոցունց միաբանութեամբ արասցէ, եւ թէ ի թագաւորէ՝ թագաւորին կամօք արասցէ»[17]։ Սա ավատատիրության բուն ոգուն հատուկ, ավատատիրական-դասային դատարան է։ Որոշ գործերով ավատատերերը դատվում էին կամ հավասար, կամ ավելի բարձր դասակիցների կողմից։ Ավատատիրական դասային կամ հավասարների դատարանի գոյությունը հաստատվում է մի այլ հոդվածով ևս։ Ահա այն. «Եւ եթէ աւելի քան զօրէնն անզթաբար հրամայիցէ գործել եւ այնու վնաս մահու հասցէ ի տերանց ընդ հարկիւ անկելոց պարտապան լիցի արեան դատաստանի զերագունից տերանց»[18]։ Ավատատիրոջն այս դեպքում պատում է ոչ թե պետական դատարանը, այլ ավելի բարձր դասակիցներից կազմված ավատատիրական-դասային դատարանը։ Այնուհետև. «Ի տարեմուտս ըստ կարի ծառայեցէ եւ յաւուրս տօնից ...Առանց դատաստանի մի տուգանեսցի. այլ ըստ կարի լիցի թէ յանցաւոր ի տէրունիսն դտցի. իսկ յայլս յանցաւոր գտեալ, դատաւորք վճարեսցին»[19] կամ՝ «Տեսանեմք զի այժմ ոմանք ...ի գլխաւոր աշխարհականց ...զի աշառանօք եւ... տգիտութեամբ թիւրեն զուղիղ դատաստանն»[20]։

Այսպիսով, ավատատիրական դատարանները երկու տեսակի էին՝ դասային և տերունական։ Ավատատիրական-դասային դատարանը հավասարների դատարանն է։ Դա քննում է ավատատերի ներքին հարաբերություններից բխող գործեր, որոնք վերաբերում են, օրինակ՝ ազնվականների գահին ու բարձին, նրանց կողմից այս կամ այն պաշտոնը գրաղեցնելուն, ավատատիրական բարոյա-իրավական որոշ նորմեր խախտելուն և այլն։

Ավատատիրական-տերունական դատարանը, որ սովորաբար հանդես է գալիս ի դեմս ավատատիրոջ կամ նրա ներկայացուցչի, քննում է այն վեճերը, որոնք ծագում են մի կողմից ավատատիրոջ, և մյուս կողմից՝ նրա վասալների կամ շինականների միջև զուտ ավատատիրական հարաբերությունների հիման վրա, օրինակ՝ հարկ չվճարել, կամ պակաս վճարել, այս կամ այն պարտավորությունը չկատարել և այլն։ Այս դատարանն իր բնույթը չի փոխում ըստ այնմ, թե ով է հանդես գալիս դատավորի դերում՝ աշխարհական ավատատերը (թագավոր, իշխան և այլն) թե հոգևոր ավատատերը՝ եկեղեցին որպես կալվածատեր։

Մինչև այժմ խոսքը աշխարհական դատարանների մասին էր, բայց Դատաստանագրքում լայնորեն ներկայացված են նաև հոգևոր-եկեղեցական դատարանները։ Անցնենք այդ կարգի գործերին։

«Զայսոսիկ ի հայրապետէ մերմէ լցցուք, զի նա է գլուխ դատաւորաց եկեղեցւոյ»[21], կամ՝ «Տես եթէ որքան ստուգիւ հրամայէ դատել կաթողիկոսաց եւ ոչ պատրիլ ի պատճառս ագահութեան եւ թիւրել զշմարիտ դատաստանս»[22]։ Թարգմանենք. «Տես թե որքան ստուգությունն է պահանջում (կանոնը) կաթողիկոսների դատից-որոշումից ինչպես և պահանջում է չդայթակղվել ագահության պատճառով և չթիրել ճշմարիտ դատաստանը»։ Ինչպես տեսնում ենք խոսքը կաթողիկոսական դատարանի մասին է։ Այնուհետև. «Իսկ եկեղեցւոյ դատաստան եպիսկոպոսն հոգասցէ»[23], կամ՝ «Եւ զայս դատաստան դատել եպիսկոպոսաց... է»[24], կամ՝ «Այլ զի եպիս-

16 Նույն տեղում, էջ 422։
17 Նույն տեղում։
18 Նույն տեղում, էջ 330։
19 Նույն տեղում, էջ 316—317։
20 Նույն տեղում, էջ 12։
21 Նույն տեղում, էջ 82։
22 Նույն տեղում, էջ 172։
23 Նույն տեղում, էջ 26։
24 Նույն տեղում, էջ 334։

կոպոսն, զի նա է առաջին դատաւորս»[25]։ Ակնհայտ է, որ պետք է արձանագրվի հոգևոր-եկեղեցական մի դատարան ևս. դա եպիսկոպոսական դատարանն է։

Բացի դրանից՝ «Արդ՝ թէպէտ յայտնի ըստ հարցմանն եւ պատասխանիդ, այլ վերակացուքն պարտապան են ապաշխարել ըստ դատելոյ վարդապետաց. եւ դատաւորաց ոչ է այդ»[26]։ Կամ՝ «Յաղագս այսմ դատաստանի լուայ եթէ վասն անձին չէ պարտ սպանանել, այլ յաղագս ընկերացն լաւ է սպանանել յորժամ աւազակքն այլազգիք իցեն. եւ պաշտել զքահանայութիւնն կամ ոչ ի դիպուածսն տեսցի ի վարդապետաց»[27], կամ «Զայդոսիկ թագաւորն դատիցի, եւ զայլս եւս դատաստան հասարակաց ի դատաւորսն թողցէ. եւ դանյայտսն զբնաւսն ի խոստովանութիւնս վարդապետացն»[28] կամ՝ «իսկ զապաշխարութեանն յամենայնս տեսցեն վարդապետք»[29] և այլն։ Այս վկայությունները, ինչպես և Դատաստանագրքում եղած մի շարք փաստեր ցույց են տալիս, սակայն, որ այսպես կոչված վարդապետական դատարանը առանձին ինքնուրույն օղակ չէր հոգևոր-եկեղեցական դատարանների շղթայում, ինչպես, օրինակ, եպիսկոպոսականը։ Վարդապետական դատարանը, ճիշտ կլիներ ասել վարդապետը որպես դատավոր, ըստ էության չէր քննում գործը կամ քննում էր այն չափով միայն, որքան անհրաժեշտ էր որոշելու համար ապաշխարության չափն ու բնույթը կամ զանցառու հոգևորականին նրա զբաղեցրած պաշտոնում թողնելու հարցը։ Բայց վարդապետները սովորաբար հրավիրվում էին մասնակցելու եպիսկոպոսական դատարանի աշխատանքներին։ Վարդապետները դատավորական իրավունքներ ունեին։ Հայկական իրավունքի պատմության մեջ, սակայն, նրանց դերն առավել մեծ է ու նշանակալից որպես հմուտ օրենսգետ-օրենսմեկնիչներ և խորհրդատուներ իրավական հարցերում։ Մեծ է եղել վարդապետների դերը, մանավանդ, հայկական իրավունքի զարգացման գործում։ Իրավաստեղծման բնագավառում վարդապետները մեզանում խաղացել են նույն դերը, ինչ՝ իրավաբանները Հռոմում։

Վերջին խմբի վկայությունները, «Թէ մեռանիցի այր ոք եւ ուստը ոչ իցէ նորս եւ ոչ դուստր, եւ ոչ այլ ոք ի ցեղէ հարց նորա, ժառանգութիւն նորա դատաւորաց յիցի թոշակ... յերիս բաժանեսցի—հայրապետին եւ եպիսկոպոսին եւ քահանայից ժողովրդեանս»[30] կամ «Տեսանեմք զի այժմ ոմանք... ի քահանայից... զի աշառանօք... եւ տգիտութեամբ թիւրեն զուղիղ դատաստանս»[31] և այլն։ Այս վկայությունները, ինչպես տեսնում ենք, վերաբերում են քահանայական դատարանին։

Այս բոլորից բացի կար հոգևոր-եկեղեցական դատարանի մի տեսակ ևս՝ եկեղեցական ժողովը, որ հրավիրվում էր դատական որոշակի նպատակներով, և որի մասին փաստերի վկայակոչումը, պարզապես, ավելորդ ենք համարում։

Վերը շարադրվածը ի մի բերելով կստանանք Մխիթար Գոշի Դատաստանագրքում արտահայտված դատարանային հետևյալ համակարգը.

1. Պետական դատարաններ
   - ա) թագավորական
   - բ) իշխանական
   - գ) ստորին
2. Ավատատիրական դատարաններ
   - ա) դասային
   - բ) տերունական
3. Հոգևոր, եկեղեցական դատարաններ
   - ա) դատաժողով
   - բ) կաթողիկոսական
   - գ) եպիսկոպոսական
   - դ) քահանայական

Սա ավատատիրական զարգացած հարաբերությունների շրջանին բնորոշ դատարանային համակարգ է։

Թող այն տպավորությունը չստեղծվի, թե դատարանային այս համակարգը պատճենային

---

25 Նույն տեղում, էջ 31։
26 Նույն տեղում, էջ 175։
27 Նույն տեղում, էջ 179։
28 Նույն տեղում, էջ 311։
29 Նույն տեղում, էջ 349։
30 Նույն տեղում, էջ 83։
31 Նույն տեղում, էջ 12։

հարազատությամբ արտացոլում է Մխիթարի ժամանակ իրականում գոյություն ունեցած դատարանները։ Այս համակարգում թվարկված դատարանների մեծագույն մասը իրականում, իրոք, կար և գործում էր։ Բայց անհրաժեշտ է մի քանի խոսք ասել երկու դատարանների մասին, որոնցից մեկը թեև չկար իրականում, բայց արտահայտվել է Դատաստանագրքում, իսկ մյուսը, թեև կար իրականում, բայց չի արտահայտվել նրանում, որով ամբողջական տեսք կստանա թե միջնադարյան Հայաստանի քննվող ժամանակաշրջանի դատարանային համակարգը և թե խոսքը դրա մասին։ Այդ դատարաններից մեկը թագավորականն էր, իսկ մյուսը կոչվում էր «ատյան ծերոց»։ Այս վերջին դատարանի մասին տեղեկությունների աղբյուրը դարձյալ Մխիթարն է և միայն Մխիթարը։ Վերն արդեն ասացինք, թե ինչու։ Թագավորական դատարանը, որ չկար իրականում, արտացոլվել է Դատաստանագրքում և պետք է տեղ գտնի դատարանային համակարգում։ Այժմ երկու խոսք ծերոց ատյանի մասին։ Մեզ հայտնի միակ վկայությունն այդ մասին Մխիթարի առակներից մեկն է։ Ահա այն. «Պղնձագործ և երկաթագործ ի խնամենալն արուեստի։ Հոխարանէին և ի լինել հակառակութեանն յատեան ևս երթային ծերոց։ Եւ նոքա մեծարգոյ ցուցին զերկաթագործ ասելով, թէ հասարակաց օգտակարն պատուական է»[32]։ Այս դատարանը, ինչպես տեսնում ենք, նման չէ վերը թվարկված դատարաններից և ոչ մեկին թե՛ կառուցվածքով և թե՛ ընդդատյա գործերի բնույթով։

Վկայակոչված առակից, ինչպես և համքարությունների ավելի ուշ շրջանին վերաբերող աղբյուրներից հայտնի է, որ ծերոց ատյանը քննում էր միայն այն վեճերը, որոնք ծագում էին համքարությունների կամ համքարականների միջև և որոնք կապված էին բացառապես արհեստի հանգամանքների հետ։ Ծերոց ատյանը համքարական հաստատություններից մեկն էր։ Քաղաքացիական-իրավական և քրեա-իրավական ընդհանուր ու սովորական վեճերի կարգավորումը այդ ատյանի իրավասության սահմաններից դուրս էր գտնվում, ուստի, ինքը դատարանն էլ դուրս է մնում դատարանային ընդհանուր համակարգից։

Գրականության մեջ այն տեսակետը կա, որ Մխիթարն, իբր, չի ընդունում վճռաբեկության իրավունքը և, հետևապես, վճռաբեկ ատյանը։ Մերազնյա անվանի ուսումնասիրողներից մեկը գրում է. «Ինչպես հայերի, նույնպես և այն ժողովուրդների մեջ, որոնք կանգնած են իրավաբանական զարգացման ստոր աստիճանների վրա, գոյություն չուներ դատաստանի վճռի դեմ բողոք բարձրացնելու կամ վճիռը բեկանել տալու իրավունքը, բացակա էր ius appelationis»[33]։ Այս տեսակետը հակասում է փաստերին, ուստի այն պետք է մերժվի։ Բերենք այս կարգի բազմաթիվ փաստերից մեկը. «Յաղագս դատաստանաց դատաւորաց... Ի դատաստանէ դատաւորացս եւ կանոնական հրամանացս ուսաք մի շնորհս յաշտիճանսն լինել եւ եկեղեցոյ զդատողութիւն. եւ եթէ արտաքոյ իրաւանց եւ աչառանօք վարիցի, անկցի յայնմ շնորհէ։ Զի զոն դատաստանք եւ դատաւորաց ի վեհիցն քան զնոսա գիտողացն զիրաւունս օրինացն»[34]։ Շատ պարզ ու որոշակի է ասում Մխիթարը, որ կար թե՛ վճռաբեկության իրավունքը, և թե՛ վճռաբեկ ատյանը։

Առհասարակ պետք է նշել, որ ինչպես պետական, այնպես էլ հոգևոր-եկեղեցական դատարանների համակարգում վերընթաց գծով յուրաքանչյուր դատարան նախորդի համար միաժամանակ վերադաս ուրեմն և վճռաբեկ ատյան է։ Այսպես. իշխանական դատարանը վճռաբեկ ատյան է ստորին դատարանի նկատմամբ, որովհետև, ընդհանրապես, «դատաւորք ճշգրիտ բնութեամբ ըստ հրամանի իշխանաց առնիցեն»։ Իսկ իշխանական դատարանի նկատմամբ վերադաս ատյանը թագավորական դատարանն է։ Նախ, այն պատճառով, որ իշխանը դատական իր իրավասությունը ստանում է թագավորից և որպես դատավոր թագավորական պաշտոնյա է, երկրորդ դատական իշխանության բարձրագույն մարմինը թագավորն է։

Այնուհետև. քահանայական դատարանի համար վերադաս ատյանն է եպիսկոպոսական դատարանը, քանի որ թեմում եպիսկոպոսն է առաջին դատավորը։ Վերջապես եպիսկոպոսական դատարանի նկատմամբ վերադաս ատյան է կաթողիկոսական դատարանը, որովհետև կաթողիկոսն է «գլուխ դատաւորաց եկեղեցոյ»։ Այսպիսով, եթե վճռաբեկության իրավունքը իրավաբանական զարգացման չափանիշ է համարվում, ապա մենք բոլոր հիմքերն ունենք ասելու, որ հայկական իրավունքն ու իրավախոհությունը զարգացման ամենաբարձր աստիճանների վրա էին գտնվում, որովհետև կար թե՛ այդ իրավունքը, և թե՛ այն իրագործող ատյանների համակարգը։

---

32 Մխիթար Գոշ, Առակներ, ընագիրը ձեռագրերի համեմատությամբ և ներածությունը Է. Պիվազյանի, Երևան, 1951, էջ 122։

33 Խ. Սամուելյան, Արյան վրեժ և փրկանք, «Ազգագրական հանդես», գիրք 10, 1903, էջ 295։

34 Մխիթարայ Գօշի Դատաստանագիրք հայոց, էջ 332։

Х. А. Торосян

СУДЕБНАЯ СИСТЕМА СРЕДНЕВЕКОВОЙ АРМЕНИИ ПО СУДЕБНИКУ МХИТАРА ГОША

Резюме

На основании данных Судебника впервые дается общая и полная картина судебной системы Армении в XII—XIII вв. В это время в Армении действовали следующие суды:

1. Государственные: царский, княжеский и низшие суды.
2. Феодальные: сословный, господский.
3. Церковные: синодальный, суд католикоса, епископа, священника.

Как известно, в 1045 г. Армянское царство Багратидов пало, и в то время, когда Мхитар Гош писал свой Судебник, в Армении не было царя, но были реальные основания думать, что армянское царство будет восстановлено. В 1198 г. в Киликии было создано Армянское царство, поэтому в Судебнике был разработан также статус царского суда.

В статье показывается, что в Армении действовал jus appelationis.